

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ 30-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆՈՒՄ

Անձրևային եղանակներից հետո արևի վառ ճառագայթները վաղ առավոտվանից ողողել էին տոնականորեն զարդարված Երևանը։ Պայծառ երկնակամարի ֆոնում պարզորոշ երևում են հոյակապ Արարատի ձյունապատ գագաթները։

Փողոցները լեփ-լեցուն են մարդկանցով. բոլորի տրամադրությունը հանդիսավոր է, բարձր։

Ալ-կարմիր կտավներով ու դրոշներով զարդարված են Լենինի անվան հրապարակի շենքերը, որոնց վրա ամրացված են սովետական պետության հիմնադիրներ՝ Լենինի ու Ստալինի նկարները։ Շենքերի ճակատներին ամրացված են սովետական պետության ականավոր գործիչների ու պանծալի զորավարների նկարները։ Հրապարակի կենտրոնում ամրացված ստենդները ցույց են տալիս Հայաստանի աշխատավորության նվաճումները ժողովրդական տնտեսության և կուլտուրայի տարբեր բնագավառներում։

Հնչում են ժամացույցի համաչափ զարկերը։ Ժամը ուղիղ 11-ն է։ Տրիբունա են բարձրանում Հայաստանի կոմպարտիայի, Հայկական ՍՍՌ կառավարության ղեկավարները, կուլտուրայի, գիտության ու արվեստի ականավոր գործիչները և արտադրության առաջավորները։

Հրապարակում շարք են կանգնած Երևանի կայազորի զորամասերը։

Զորքերին ու մայրաքաղաքի աշխատավորությանը շնորհավորական հակիրճ ճառով դիմում է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Մ. Պապյանը։

Սկսվում է զորահանդեսը։

Հատակ քայլքով տրիբունայի մոտից անցնում են Սովետական բանակի քաջարի ռազմիկները։

Զորահանդեսը ավարտված է։

Հրապարակ են մտնում ցուցարարների շարասյունները, որոնց շարքերի վրա ալեկոծվում է դրոշակների ծովը։

Անցնում են Ստալինյան ռայոնի աշխատավորները։ Շարժական պլատֆորմի վրա ամրացված են գործարանի ցեխերի մակետները, Ստալինյան ռայոնի ձեռնարկությունների թողարկած բազմաթիվ արտադրանքները պատկերող կտավներ։ Շարասյան առջևից անցնում են Ավտոդրոնի գործարանի բանվորները։ Վառվում են ավտոմեքենայի վրա պատրաստված փոքրիկ կարբիդի գործարանի հնոցները, դազգահաշինական գործարանի բանվորները՝ հրապարտ վեր են բարձրացրել խառատի ունիվերսալ մետաղահատ դազգահ պատկերող պլակատը։ Էլեկտրոմեքենաշինական գործարանի բանվորները տանում են էլեկտրական վառ կրակներով լուսավորված բանավանի մակետը։ Գեղեցիկ է ձևավորված ռեսպուբլիկայի խոշորագույն ձեռնարկության՝ Կիրովի անվան գործարանի շարասյունը։

— Փա՜ռք մեծ Ստալինին,— հնչում է տրիբունայից։ Եվ այդ կեցցեին հազարավոր ձայներ պատասխանում են ցնծագին ուռայով։

Ահա անցնում են Սպանդարյան ռայոնի աշխատավորները։ Տոնականորեն զարդարված ավտոմեքենայի վրա դրված են Լենինի

և Ստալինի քանդակները։ Արևի տակ փայլում է իր արտադրանքի տասնյակ տեսակները ցուցադրող «Արարատ» գործարանի ցուցափեղկը։ Անցնում են արվեստի աշխատողները։

Սկսվում է Մոլոտովյան ռայոնի աշխատավորների շարասյան երթը։ Շարասյան առջևը երևում է մի նավ, որի տախտակամածի վրա 16 միութենական ռեսպուբլիկաների գերբերի տակ կանգնած են ազգային տարազներ հագած պատանիներ ու աղջիկներ։ Երգով ու պարով են անցնում Մոլոտովյան ռայոնի ձեռնարկությունների ու հիմնարկությունների կոլեկտիվները։ Երևանի կոնսերվագործները ցուցադրում են իրենց պեսպես արտադրանքները։ Շարասյան երթը եզրափակում են Սունդուկյանի անվան Հայկական Պետական թատրոնի բեմի վարպետները և դերասանները։

Լենինի և Ստալինի հոյակապ քանդակները, գրքերի վիթխարի մակետները, բազմաթիվ դրոշները, նկարները, լոզունգները զարդարում են Կիրովյան ռայոնի աշխատավորների առջևի շարասյունը։ Անցնում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կոլեկտիվը։ Կուռ շարքերով է շարժվում ուսանող երիտասարդությունը։ Ուրախ անցնում են պիոներները ու դպրոցականները։ Պիոներների Երևանի պալատի բազմաթիվ խմբակների մասնակիցները տանում են իրենց պատրաստած նկարները, քանդակները, մակետները։

Կեցցեների, ուռռաների որոտից թնդում է հրապարակը։

Բոլոր շարասյուներում էլ կան արտասահմանից հայրենիք վերադարձած շատ հայեր։ Նրանցից շատերն առաջին անգամն են ժողովրդական ցույցին մասնակցում հայրենի հողի վրա։ Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորների հետ միասին նրանք մեծ խանդավառությամբ լծվել են հայրենիքի վիթխարի շինարարությանը։

Հրապարակ են մտնում ֆիզկուլտուրնիկների շարասյունները։ Նրանք անցնում են սեղմ, կուռ շարքերով։ Նրանց գլխավերևը փողփողում են սպորտային ընկերությունների բազմաթիվ ու բազմերանգ դրոշները։

Ցույցն ավարտված է։ Նրան մասնակցեցին Հայաստանի մայրաքաղաքի մոտ 150 հազար աշխատավորներ։

***

Երեկոյան Լենինի անվան հրապարակում և այլ հրապարակներում տեղի ունեցան ինքնագործ խմբակների տոնական ելույթներ։ Երևանցիները մեծ ցնծությամբ դիտեցին տոնական սալյուտը։

Մինչև ուշ գիշեր քաղաքում շարունակվում էր համաժողովրդական ցնծությունը։

ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Լենինականի տոնականորեն զարդարված հրապարակներում, փողոցներում և բանվորական ավաններում վաղ առավոտից սկսվեց համաժողովրդական ցնծությունը։

Ժամը 11-ին սկսվում է Մեծ Հոկտեմբերի 30-ամյակին նվիրված աշխատավորության շքերթը։ Փողային նվագախմբի հաղթական հնչյունների տակ առաջինը Ստալինի անվան հրապարակն են մտնում պիոներ-դպրոցականների գեղեցիկ ու աշխույժ խմբերը։

Նրանք շարքի առջևից տանում են սովետական պետության կազմակերպիչներ՝ Լենինի ու Ստալինի և նրանց մերձավոր զինակիցների նկարները, բազմաթիվ լոզունգներ, պլակատներ, դրոշակներ։

Այնուհետև հրապարակ են մտնում Վ. Մ. Մոլոտովի անվան մանվածքային գործարանի բանվորները։ Ապա անցնում են Կոշիկի, Մեխանիկական գործարանների և մեքենա-տրակտորային արհեստանոցի կոլեկտիվները։ Այնուհետև անցնում են Տեքստիլ և Մսի կոմբինատների, Փայտամշակման, Կաթի և մյուս գործարանների բանվորների շարասյունները։

Հանկարծ լսվում է շոգեքարշի սուլոցը և հրապարակ է մտնում երկաթուղային հանգույցի բանվորների շարասյունը։ Նրանք որպես նվեր մեծ տոնին, նորոգումից բաց էին թողել մեկ շոգեքարշ։

Ապա գալիս են ինտելիգենցիայի և ուսանողության շարասյունները, ինչպես նաև արտասահմանից հայրենիք վերադարձած հայ աշխատավորության շարքերը։

Լենինականի աշխատավորության շքերթը, որին մասնակցում էին ավելի քան երեսուն հազար մարդ, վերածվեց հայրենասիրական ջերմ ցույցի ի պատիվ սովետական հայրենիքի, Սովետական Միության հաղթանակների ոգեշնչող և կազմակերպիչ մեծ Ստալինի։

ԱԼԱՎԵՐԴՈՒՄ

Նոյեմբերի 7-ին Ալավերդի քաղաքը տոնական տեսք էր ընդունել։ Հրապարակը, փողոցներն ու գործարանները զարդարված էին բազմաթիվ լոզունգներով, պլակատներով, դրոշակներով, Վ. Ի. Լենինի, Ի. Վ. Ստալինի, պարտիայի ու կառավարության ղեկավարների նկարներով։

Մեծ տոնին նվիրված խանդավառ ցույցն սկսվեց առավոտյան ժամը 10-ին։ Աշխատավորների շարասյան առջևից գնում էին Պղնձաձուլական գործարանի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները։ Ապա հրապարակով անցնում են Քիմիական գործարանի բանվորները, երկաթուղային-ները, ինտելիգենցիան, Սանահին գյուղի կոլխոզնիկները, դպրոցականները։

ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Դեռ մի քանի օր առաջ Կիրովական քաղաքն ընդունել էր տոնական տեսք։ Շենքերը զարդարված էին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի ղեկավարների՝ Լենինի և Ստալինի նկարներով, դրոշներով, պլակատներով և լոզունգներով։

Նոյեմբերի 7-ին, առավոտյան, կազմակերպվեց աշխատավորության հանդիսավոր երթը։

Հրապարակ են մտնում դպրոցականները։ Նրանցից հետո անցնում են քաղաքի արտադրական ձեռնարկությունների կոլեկտիվները։ Առաջինն անցնում է Մյասնիկյանի անվան գործարանի կոլեկտիվը, ապա անցնում են [illegible] գործարանի կառուցողները։ Ցույցին մասնակցում են նաև քաղաքամերձ կոլխոզների կոլխոզնիկները։

ՂԱՓԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի երեսնամյակը Ղափան քաղաքի աշխատավորները նշեցին մեծ ցույցով, որին մասնակցում էին ավելի քան չորս հազար մարդ։

Այդ օրը քաղաքի հրապարակներից մեկում հանդիսավորությամբ բացվեց սովետական ժողովրդի հանճարեղ առաջնորդ մեծ Ստալինի արձանը, իսկ քաղաքային պարկում՝ ընկեր Ստալինի մերձավոր զինակից, հայ ժողովրդի արժանավոր զավակ Ա. Ի. Միկոյանի արձանը։

***

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի երեսունամյակը մեծ խանդավառությամբ նշեցին նաև Հայաստանի մյուս բոլոր քաղաքների ու շրջանների աշխատավորները։